

Լ. Գ. ՄՈՒՐՍԴՅԱՆ. Արփիար Արփիարյան. Կյանքը և ստեղծագործությունը. 29 Ա հրատարակչություն, Երևան, 1991, 420 էջ:

Անարդար կիններ ասել, թե Արփիար Արփիարյանի ժառանգությունը դուրս է մնացել հայ դրականագիտության ուշադրությունից: Գրքովել են մենագրություններ (Ս. Հակոբյանի, Գ. Սաֆարյանի և ուրիշների), հեղուկներ 'և ուսումնասիրություններ նրա ստեղծագործության տարբեր կողմերի մասին թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Բայց իր համակողմանիությամբ, ընդգրկման ամբողջությամբ չառարար Մուրադյանի աշխատությունը թերևս առաջինն է: Սա ամենին հրկրորդական հանգամանք չէ Մուրադյանի աշխատության առանձնահատկությունների շարքում, մանավանդ որ Արփիարյանի ժառանգությունը շատ կողմերով զարմանալիորեն համահնչուն է մեր ժողովրդի և մտավորականության այսօրվա հոգևորին: Աշխատանքը կաղմված է երեք մեծ գլուխներին՝ «Կյանքը և հրապարակախոսական գործունեությունը», «Արփիար Արփիարյանի գեղարվեստական ստեղծագործությունը», «Գրականության քննադատն ու պատմաբանը»: Գլուխներինց ամեն մեկը կարող է դիտվել իբրև մենագրություն Արփիարյանի ժառանգության երեք փուլեր՝ բաժինների մասին: Եվ, երեկ ամենահետադարձանը դրանց մեջ առաջինն է նվիրված Արփիարյանի կյանքին ու հրապարակախոսությանը: Բոլոր նրանք, ովքեր շատ թե թե ծանոթ են հայ դրականությանը, դիտեն, թե ինչ բուռն կյանք է ապրել Արփիարյանը, լսել են նրա եղբրական մահվան մասին: Բայց Մուրադյանը ծավալում է մեր տուչե այդ կյանքը իր կարևոր մանրամասնություններով, անհատականության դարգացման տրամաբանությամբ, ոչինչ կամ գրեթե ոչինչ էական բաց չթողնելով: Եվ, դիմելով մաշված փոխաբերությանը, իրավունք ունենք ասելու, որ նրա աշխատության էջերից հանում է մեր պատմության, մշակույթի ամենալուսավոր դեմքերից մեկը, որն իրեն իսկապես անմասցորդ նվիրեց ժողովրդին, լուսնեցավ անձնական կյանք, բայց ունեցավ բազմաթիվ թշնամիներ, որոնք չէին բավարարվում խայթոցներով ու հայհույններով և որոնք ի վերջո

սպանեցին նրան: Ահա թե ինչու այս գլխի որոշ էջեր գրեթե բեկտորիստիկայի պես են կարդացվում, թեև աշխատության ակուդեմիական բնույթը ակնհայտ է, և հեղինակը ամենին հակում չի ցուցաբերում արտաքին էֆեկտների հանդեպ: Այս գլուխն է, որ տալիս է Արփիարյանի անհատականության ազդողական ուրվագիծը, մյուսները այդ ուրվագիծը լրացնում են և հագեցնում նորանոր գծերով: Եվ, պետք է ենթադրել, հենց այս գլուխը ամենից շատ աշխատանք է պահանջել հեղինակից, որովհետև Արփիարյանի հրապարակախոսությունը ցրված է անցյալ դարի թիֆլիսյան և արևմտահայկական պարբերականների էջերում, և, ինչքան ինձ հայտնի է, որևէ մեկը չի փորձել դրա լավագույն կտորները գոնե հավաքել ու հրատարակել առանձին դրքով: Ջետադոտություն հեղինակը քրքրել է այն բոլոր պարբերականները, որոնք խմբագրել և որոնց աշխատակցել է Արփիարյանը, ուսումնասիրել նրա ամենատարբեր բնույթի հրապարակումները և տվել մեր այդ լավագույն հրապարակախոսներից մեկի ժառանգության ամենալիզ պատկերը, քննարկելով այն ըստ թեմաների: Չափազանց շատ ժամանակ կպահանջվեր հետևելու հետադոտողին նրա արպտումների բոլոր ոլորաններում, ուստի այստեղ կբավարարվեմ կանդառնելով միայն Արփիարյանի անձնավորության այն գծերի վրա, որոնք ինձ առանձնապես հետաքրքրական են թվում և որոնք Մուրադյանը լուսաբանել է շատ հիմնավոր: Արփիարյանը թերևս ամենակրթոտ մարտիկներից մեկն էր հայ հասարակական կյանքում, որը պատրաստ էր գնալ ամեն զոհողության իր տեսակետներից շահաթարվեու համար: Անկասկած, ճիշտ է Մուրադյանը, որը նշում է Արփիարյանի գրական երկերից մեկի՝ «Հողու զավակը» վիպակի ինքնակենսագրական բնույթը: Ինչպես այդ գործի գլխավոր հերոսը՝ Նավտրյանը, այնպես էլ Արփիարյանը, իրենց կյանքի գործը համարում էին պայքարը իրենց գաղափարների և իդեալների հա-

մար: Եվ Արփիարյանի գոհվելը իր հակա-
 ոակորդի գնդակից այդպիսի կյանքի բնական
 վախճանն էր: Բայց մարտիկի այս կրքոտ
 խառնվածքը լիուրացրեց Արփիարյանին, և Լը-
 րեմն նա զարմանալիորեն լայնախոհ է իր
 դատողություններում, ևս կասկի՝ անսովոր լայ-
 նախոհ: Այստեղ ևս կուզենայի Լ. Մուրադյանի
 աշխատությունից բերել Արփիարյանի մշակրից
 մեկը, որը բավական անսովոր է կրքոտ հե-
 ղափոխականի և պահպանողականության դեմ
 անհայտ պայքար մղած հրապարակախոսի քն-
 րանում: «Պահպանողականությունը և հեղա-
 փոխականությունը միևնույն աղղային կյանքի
 մր Լրևույթներն են. ոչ մեկը կրնանք արհա-
 մարհնել, ոչ մյուսը՝ առանց մեծապես տուժե-
 լուս (էջ 408): Ահա մի մոտեցում, որ պետք
 է առաջնորդի բոլոր հասարակական գործիչ-
 ներին, հասարակական կյանքի բոլոր պատ-
 մարաններին:

Աղղային խնդիրների նկատմամբ նման վե-
 րաբերմունքը պատահական բան չէր Արփիար-
 յանի համար, այլ դիտակցված ելակետ, մի
 ևզրակացություն, որ ապացուցվում է Լ. Մու-
 րադյանի գրքի բազմաթիվ փաստերով: Բերեմ
 ևս մեկը, որ դարձյալ այսօր շատ ասեմական
 է հնչում իր գրեթե բոլոր կետերով: «Ձեզ
 կթողունք դատել, թե ո՞րն է այժմ ազդին հա-
 մար շահավորը. աղղային պաշտոնական մար-
 միններու մեջ համաձայնություն, թե անհա-
 մաձայնություն: Աղղ. ժողով և պատրիարք
 խոշորացուցավ կը դիտեն միմյանց թևություն-
 ները... օտար թշնամիներն մեր վրա կը հըս-
 կեն և մենք կաշխատենք կործանել մեր տու-
 նը, որ արդեն շատ կանգուն ալ չէ» (էջ 56):
 Այս երկու մեջբերումները վերցված են Ար-
 փիարյանի գործունեության վաղ և ուշ շրջան-
 ների դրածներից. ուրեմն առավել ևս մենք
 հեղինակի հետ իրավունք ունենք մտածելու, որ
 Արփիարյանի համար կուսակցական բոլոր մտա-
 հոգություններից առավելը ազդի, ժողովրդի
 շահն էր:

Բայց այս լայնախոհությունը ամենևին չը-
 րթացրեց Արփիարյանի դրիչը, ևրր նա մեր-
 կացնում էր աղղային մարմինների ղեկավար-
 ներին, Պուտո հայ հարուստներին, նույն այդ
 պահպանողականներին, և, առավել ևս, երր
 նա դրում էր Հայաստանի և հայ ժողովրդի
 ճակատագրի հանդեպ մեծ տերությունների վե-
 րաբերմունքի մասին: Այսօր, երբ մենք հայտ-
 նվել ենք միջազգային հարաբերությունների
 խճճված հանդուցում, շենք կարող առավել
 սրված ուղղորդված մար շունդերից Արփիար-
 յանի մտքերը:

Ահա մի դրվագ Արփիարյանի հրապարա-
 կախոսական գործունեությունից, որ մանրա-
 մասնորեն լուսարանում է Լ. Մուրադյանը: Բեռ-
 լինի վեհաժողովը հայության մի մասի մեջ
 հույսեր ծնեց: Մինաս Չեք՝ զը, ինչպես գրում
 է Լ. Մուրադյանը, «գրական արդյունք է հա-
 մարում Հայկական հարցի միջազգային աս-
 պարեզ հանելու, «Հասարակական նույն մտայ-
 նությունն էլ հույսեր էր փայփայում Անգլիայի
 հովանավորությամբ Հայկական հարցի դիվա-
 նագիտական լուծմանը» (էջ 41): Բայց Ար-
 փիարյանը շտրվեց այս սին հույսերին: «Ար-
 փիարյանի թղթակցություններում հետևողակա-
 նորեն, թաղմաթիվ փաստերով ապացուցվում
 էր, որ Անգլիայի և Թուրքիայի շահերը Հայկա-
 կան հարցում ոչ թե բախվում, այլ համընկ-
 նում են» (ն. ա.): Արփիարյանը մի դրական
 բան էր տեսնում լորդ Բիկոնսֆիլդի ճառի մեջ՝
 այն «անգլիասեր հայոց աչքերն կրանա»: Բայց,
 դժբախտաբար, մեր աչքերը որոշ իրողություն-
 ների հանդեպ բացվում են մեծ դժվարու-
 թյամբ, երբեմն նույնիսկ հարյուր տարին դրա
 համար քիչ է: Վերը բերված դատողություն-
 ներում Հայկական հարցի տեղ դրեք Արցա-
 խի խնդիրը, այսինքն, նույն Հայկական հար-
 ցի մի կոնկրետ դրսևորումը, և ձեզ կարող
 է թվալ, որ այդ մտքերը ասված են այսօր
 և ոչ թե հարյուր տարի առաջ:

Նույնքան ճշափ էր Արփիարյանի հայացքը
 նաև Թուրքիայի և Ռուսաստանի հանդեպ: Այն
 ժամանակ էլ կային մարդիկ, որոնք Թուրքա-
 չի առիթով ասում էին՝ նոր դարք, նոր բարք:
 Այսինքն, հավատացած էին, որ Թուրքիան
 փոխվել է մեր հանդեպ: Արփիարյանը հասկա-
 նում էր, որ այդպես չէ՝ «նոր դարք, հին
 բարք»: Եվ մի անգամ չէ, որ նա մերկացրել
 է հին ու նոր Թուրքերի քաղաքականությունը
 և ոչ միայն հրապարակախոսության, այլև
 ղեզարվեստական գործերի մեջ:

Լ. Մուրադյանը հանգամանորեն քննում է
 Արփիարյանի վերաբերմունքը Ռուսաստանի և
 ոուս մշակույթի հանդեպ: Այս խնդրին շատ
 էջեր են նվիրված գրքի տարրեր գլուխներում,
 և ուշագրությունը պետք է բացատրել ոչ թե
 այն տարիների քաղաքական կոնյունկտուրա-
 յով, այլ իր՝ Արփիարյանի, գրական և քաղա-
 քական հայացքների ներքին տրամաբանու-
 թյամբ: Առհասարակ, Լ. Մուրադյանի աշխա-
 տության մեջ ոչ հեռու անցյալի քաղաքական-
 գաղափարախոսական կոնյունկտուրայի հետքե-
 րը գրեթե չեն Լրևում: Ինչ վերաբերում է Ռու-
 սաստանին, ապա ժամանակաշրջանի կոնկրետ
 պատմական պայմանների բերումով, նա չէք

Չարոզ շհամեմատել Արևելյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի գոյության պայմանները և շգրել, օրինակ, այսպիսի տողեր (Բիֆլիս այցելելուց հետո)։ «Շայ գրավաճառանոց մը, արքունական մեծ փողոցին վրա, ահա տարօրինակ երևույթ մը, որ մեր պոլսեցվոց հասկցնելու համար բավական գծվարություն պետք է կրել, բայց այսօրինակ զարմանալի շատ երևույթներու վկա եղած եմ և կլինեմ» (էջ 84—85)։ Սա այն է, ինչ և Մուրադյանն անվանում է «ազգային-հասարակական միջավայրի տարբեր դրսևորումներ»։ Հայոց հարաբերական ազատությունները ռուսական կայսրության մեջ անկասկած պետք է զարմացնելին մեր թուրքահայ հայրենակցին, որը Պոլսում շատ հաճախ իրավունք չուներ, ինչպես գրում է իր երգիծական գործերից մեկում, հայ պատմական գործիչների անուններն անգամ հիշել։ Սա օրինակով իրականություն էր, և եթե նման բաները կարելի է անվանել ռուսասիրություն, ապա այս վերջինը նույն օրինակով իրականության արտացոլումն էր միայն։ Իհարկե, Արփիարյանը շատ հեռու էր Ռուսաստանը անվերապահորեն ընդունելուց և շատ զայրալից տողեր է գրել հայկական դպրոցների և եկեղեցապատկան գույքի նկատմամբ ռուս կայսրության վարած քաղաքականության մասին (Չորեք ևս և Մուրադյանն անգրագառնում է մանրամասնորեն)։ Սակայն, եթե դիմենք այս վերջին շրջանում այնքան շարժված բաներին, ապա նա հստակօրեն ռուսական կողմնորոշում տեսնելու

Այս գլխի մասին կարելի էր դեռ երկար թռտել, բայց, կարծում եմ, այս մի քանի օրինակները բավական են և Մուրադյանի գիտական բարեխղճությունն ու սթափ հայացքը գծահատելու համար։ Ամենից շատ հենց այս գլխի առնչությամբ երեք պետք է խոսել Մուրադյանի գիտական ոճի մի առանձնահատկության մասին. նա հաճախ գերադասում է «ճայն տալ» իրեն՝ Արփիարյանին, որ, հաշվի առնելով նրա հրապարակախոսության այսօր գրեթե անմատչելի լինելը այսպես կոչված շարժային ընթերցողի համար, ինքնին օգտակար է։ Արփիարյանի մտքերի ընթրությունը մեծ մասամբ կատարված է շատ հաջող և դրանք ուղեկցվում են, ինչպես մենք աշխատեցինք ցույց տալ, հմուտ մեկնարանություններով։

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է գրողի գեղարվեստական ժառանգությանը։ Արփիարյանի գրածների այս մասը ավելի ծանր է այսօրվա ընթերցողին, սակայն և Մուրադյանը մանրամասնորեն է քննում Արփիար-

յանի գեղարվեստական գործերը, անգրագառնում հայ քննադատության մեջ գրանց շուրջ եղած վեճերին, և, ընդհանուր առմամբ, նրա գնահատականները ընդունելի են։ Մանավանդ, երբ նա բանավիճում է նախորդ շրջանի հեղինակների հետ (Գ. Ստեփանյան), որոնց դատողություններում զգացվում է այն ժամանակներին հատուկ պարզունակացումը և սխեմատիզմը։ Այստեղ և Մուրադյանի գլխավոր հոգսը Արփիարյանի իրրև գեղագետի մտածողության առանձնահատկությունների կամ ինքնատիպության բացահայտումն է ու բացատրությունը։ Գլխի հենց սկզբում առաջ է քաշվում գեղարվեստական պատկերման թանձր ինքնատիպության միտքը (էջ 181)։ Այդ ինքնատիպությունը, անկասկած, կապվում էր ռեալիստական կամ իրապաշտական մեթոդի հետ, որի մարտիկն ու գաղափարախոսը եղավ Արփիարյանը արևմտահայ գրականության մեջ։ «Երազի մը գինը» պատմվածքի առնչությամբ և Մուրադյանը հաստատում է, որ այդ պատմվածքով սկզբը գրվեց արևմտահայ արձակի այն նշանակալից ընթացքին, որի շարունակողներն ու զարգացնողները եղան Տ. Կամսարականն ու Գ. Ջոհրայը, և. Բաշալյանն ու Բլկատինցին (ն. տ.)։ Այսպես էր, և ուսամենամեծ գործն էր, որ Արփիարյանը կատարեց արևմտահայ գեղեցիկ դպրության մեջ, այնտեղ արմատավորելով արձակի սոցիալական ուղղվածությունը (էջ 184) և տիպերի ու իրադարձությունների սոցիալական դետեյմինիզմը (էջ 176)։ Եվ, իհարկե, չքմարիտ է և Մուրադյանը, երբ գրում է, որ Արփիարյանի ստեղծագործությունը ասպարեզ է բերել «հասարակական հարաբերությունների մինչ այդ շրացահայտված ոլորտները» (էջ 252)։ Այդ ոլորտների նկարագրությունը կապված էր հենց Արփիարյանի ողջ ստեղծագործության սոցիալական ուղղվածության հետ։

Այս գլխի կարևոր հատվածներից եմ համարում Ռոսկի ապարանջանն վիպակի ստեղծագործական պատմությունը, որտեղ քննվում է Արփիարյանի այդ հայտնի վիպակի մշակման ընթացքը՝ ստույգ և պատճառաբանված մեկնարանություններով ու հետևություններով։ Բանասերի համար, անկասկած, հետաքրքրական պետք է լինի «Դերասանուհին» պատմվածքի հերոսուհու իրական նախատիպի նշումը։ Կարելի է ցույց տալ մասնավոր հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ ուրիշ էջեր ևս։

Բայց այս գլխի մի շարք պնդումները հիմնավոր շին թվում. և զա վերաբերում է ամենից առաջ այն էջերին, օրոնցում հնաազատ-

պաշտպանում է Արփիարյանին նրա գեղարձիսուսական ժառանգության թուլության մեղադրանքներով: Այստեղ և՛ պաշտպանում է՝ և՛ ամեղագրանքները բառերը պետք է ընկալել յակնբռենքի ժեշտ, որովհետև ոչ Արփիարյանն է պաշտպանություն կարիք դրում, ոչ էլ մեղադրանքները մտաշարի պակասեցում են նրա ժառանգության արժեքը, կենդանի ուրիշ կերպ պետք է դիտվի:

Բայց հայտնի է Մուրադյանի մի քանի վերլուծությունների մասին: Մի կողմից, նա, անկասկած, Հիշտ է վարվում, ձգտելով բացահայտել Արփիարյանի գեղագիտության ինքնատիպությունը և նրա գործերի բոլոր հատկանիշները գիտելով այդ ինքնատիպության շարժանկներում: Սա միակ ճշմարիտ գրականագիտական մոտեցումն է: Բայց հարցն այն է, որ Արփիարյանի գրական ժառանգությունը ամենևին էլ նրա անհատականության բարձրագույն գրանցումը չէ և նրա գործունեության ու վաստակի մեջ գրավում է մի տեղ, որ խորապես պայմանավորված է Արփիարյանի՝ գործիչ-մարտիկի, բնավորությամբ և հասարակական-քաղաքական խոր շահագրգռություններով: Անշուշտ, նորություն չէ իմ ասածը, գրականագիտության մեջ, լավ թե վատ, ասվել է (ավելի շատ վատ, և գուցե գրանից է հեղինակի այս կրթությունը, պաշտպանելու գրող Արփիարյանին): Վերջապես, լ. Մուրադյանը ճաշակավոր գրականագետ է, և լավ տեսնում է, ենթացելով առանձին գիտողություններից, Արփիարյանի գեղարվեստի ենթակա դերը: Օրինակ. «Հրապարակախոսության գեղարվեստական մի ուրույն արձագանք է և «Միմոնական տերտեր» պատմվածքը: Կամ երբ բերում է մի հատված Արփիարյանի նամակից «Կարմիր ժամուցի» մասին («Այգիսի գրվածքները, որքան որ ալ տկար ըլլան գեղարվեստական տեսակետով...», բայց և այնպես ժամանակին կյանքը ժողովրդին ավելի լավ կը ճանչնին...», էջ 10), չի կարող չնկատել Արփիարյանի այս ինքնագնահատականի ճշմարտացիությունը: Վիճելով նախորդների հետ, նա գրում է, որ «գեղարվեստական ստեղծագործությունը բերելով հրապարակախոսական տարրը, Արփիարյանը որոշակիացրել է հավաստի մարմնավորվող գեպը, իրագործությունը, որոնց միջոցով գեղարվեստական ընդհանրացումը ստանում է իրականության լիարժեք պատկերման առանձնահատկություն» (էջ 225): Այս գեպը համեմատությունները այլ դասականների հետ լավ հենարան չեն կարող լինել: Նրանց մոտ հրապարակախոսական տարրը ենթակվում է գեղարվեստական մտահղացմանը,

իսկ Արփիարյանի գործերում, ընդհակառակը, գեղարվեստական մտահղացումը ենթարկված է հրապարակախոսության և պայքարի կարիքներին (ինչ հետևում է իր՝ լ. Մուրադյանի, քիչ առաջ բերված խոսքերից «Միմոնական տերտերի» մասին):

Խոսքը այստեղ Արփիարյանի գեղարվեստական տաղանդի մասին չէ, այլ նրա ողջ գործունեության ուղղվածություն: Նա ամենից առաջ մարտիկ էր ու հասարակական-քաղաքական գործիչ, որի համար գրականությունը ուժեղագույն զենքն էր հանուն իր գաղափարների մղած պայքարում: Վերջապես, կարելի է հիշել «Շոգու զավակի» գլխավոր հերոսի՝ Նավարյանի խոսքերը Պոլսի վերադառնալուց առաջ. «Կը պատրաստեմ գործ մը, որ եթե դրական մեծ արժանիք ալ չունենա, գեթ պիտի կրնա սփոփանք մը ըլլալ վերավորված սերտերու, զայրացած հոգիներու, և աջակցություն մը՝ գաղափարի մարտը մղողներուն»:

Սա հենց այն ժրագիրն է, որ ամբողջ կյանքում իրագործում էր Արփիարյանը: Ի վերջո, բուն գեղարվեստական կատարելությունը նրա համար շատ կարևոր չէր: Նրան հետաքրքրում էր գրական երկի ուղղակի հասարակական ազդեցությունը: Գրականությունը նրա համար ամենից առաջ պայքարի զենք էր: Թերևս՝ գլխավոր զենքը:

Նույն այս սկզբունքից են ծնվում նրա գրականագիտական հայացքները. դրանց նվիրված է աշխատության երրորդ գլուխը՝ նույնքան հանգամանալից ու փաստերով հագեցած, ինչքան առաջին երկու գլուխները: Այստեղ բնութագրված են Արփիարյանի գրականագիտական քննադատական բոլոր շատ թե քիչ նշանակալից գործերը (սրանց թվում և Արփիարյանի հողվածները նկարչության, Պոլսո հայ նկարիչների մասին): Արփիարյանը դարձավ մի ամբողջ գրական շարժման առաջնորդ, արձագանքեց իր ժամանակի գրական շատ թե քիչ արժեքավոր բոլոր երևույթներին, և միշտ ներքին հետաքրքրում էր մի խնդիր՝ ի՞նչ հասարակական արժեք ունի արվեստի ստեղծագործությունը, ի՞նչ իդեալների է ծառայում, նույնիսկ կարելի է պնդել, որ նրա գլխավոր սկզբունքը «արվեստը արվեստի համար» սկզբունքի մերժումն էր: Եվ նրա իրապատկությունը այս իրական իմաստն ունեւր: Այն ամենը, ինչ արձագանքում էր կյանքի, հայ ժողովրդի իրական հոգսերին՝ լավ էր: Եվ այս գեպում ուսմանտիզմի և ուսուցիչի տարբերություն:

1 Արփիար Արփիարյան. Երկեր, Երևան, 1987, էջ 229:

Ներք իրականում քիչ նշանակություն ունենին: Իրապաշտություն կոչվածը նրա համար շատ ավելի լայն հասկացություն էր, քան գեղարվեստական ուղղությունը իր ճշդիտ իմաստով: Ժամանակին Հայկունին անգամ տարակուսում էր, որ իրապաշտության պաշտպան Արփիարյանը այնքան կրթությամբ պաշտպանում և պրոպագանդում է առմանտիկ Բաֆֆու ստեղծագործությունը: Այնինչ Արփիարյանի համար առմանտիզմի և իրապաշտության գեղագիտական սկզբունքներից ավելի կարևոր էր այն հղորդ և բարերար ազդեցությունը, որ գործում էր Բաֆֆին հայ մտքի, զգացմունքների վրա:

Ի վերջո, ինքն՝ Արփիարյանը, երբեք էլ չեմացուր իրապաշտ լղարձավ իր գեղարվեստական սկզբունքներում: Միշտ դիմելով կյանքի ցավոտ խնդիրներին, դրանց գեղարվեստական մարմնավորման մեջ նա գտնվում էր առմանտիզմի բավական զորեղ ազդեցության տակ, որ ընթերցողն զգում է առաջին իսկ հայացքից, և ի Մուրադյանը մի անգամ չէ, որ իր կոնկրետ վերլուծություններում մատնացույց է անում այս հանգամանքը:

Այլ խնդիր է, որ Արփիարյանի ազդեցությունը շատ կարևոր եղավ այնպիսի իրապես ահալիստ գրողների համար, ինչպիսիք էին Ջոհրազը, Բաշալյանը, Կամսարականը, որոնց համար գրականությունն՝ արդեն գրականություն էր իր ինքնուրույն գեղարվեստական արժեքով: Վերականգնության հասարակական օգտակարության սկզբունքը այն շափանիչն է, որով արդարացվում է գրականության, արվեստի վեհ հոշումը (էջ 315), գրում է ի. Մուրադյանը, բնութագրելով Արփիարյանի գրականագիտական-քննադատական հայացքնեցը և այս եզրակացություն հետ չի կարելի շճամաձայնվել:

Այս նույն աղբյուրից է գալիս նրա խորը և

հարգալից հետաքրքրությունը ինչպես աթենուհայ, այնպես էլ սուտ գրականության հանդեպ Այո առթիվ ի. Մուրադյանը գրում է. «Թրգլխավորած սերնդի գրականության համար քննադատը ուսանելի է դիտում ամենից առաջ Արարատյան գրականությանը բնորոշ ժողովրդագային բովանդակությունը» (էջ 398): Հայացքիկ այստեղ էլ նշենք, որ երբ Մուրադյանին հետաքրքրող հատվածում Արփիարյանը հիշում է իրեն ամենից շատ հետաքրքրող արևելահայ գրողներին, կողք-կողքի նշում է ահալիստներ Սունդուկյանին ու Պառլյանին և ուղղափառ առմանտիկներ Պասկանյանին, Մուրացյանին...

Հնարավոր չէ կանգ առնել Լուսուրա Մուրադյանի աշխատության մեջ արժարծված բազմաթիվ հարցերի վրա, որոնք առնչվում են ոչ միայն արևմտահայ գրականության և ոչ միայն գրականության խնդիրներին, այլև XIX դարի վերջի և XX դարի սկզբի մեր հոգևոր և հոսարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր կողմերին: Մենագրությունը հարուստ նյութ է տալիս այս բոլորի մասին մտածելու համար: Բայց նրա գլխավոր արժանիքը մեր ոչ հեռավոր անցյալի ամենանշանակալից և ամենահետաքրքրական գործիչներից մեկի՝ Արփիար Արփիարյանի ամբողջական դիմանկարի ոտնդժումն է իր, բառիս ամենալավ իմաստով, ակադեմիականորեն համակողմանի, փաստալից և հիմնավոր մենագրության մեջ:

Կարելի է ափսոսալ միայն մի բանի համար. աշխատության երեք գլուխներում այդքան մանրամասնորեն դժելով Արփիարյանի պատկերը, նա երևի պետք է մի քանի էջով ամփոփեր ամբողջ առվածը, այն ընդհանրացնելու, Արփիարյանի դիմանկարի առավել կարևոր դժերը շնչտելու համար:

Բաճաճի. գիտ. ղակտուր Ա. Կ. ԵՂԵՂԱՐՅԱՆ